

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուկարիոյ համար


Տարեկան ֆրք 10

Վեցամսեայ " 5

ԿԱՆԻՒԻ

20

ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման

Տարեկան ֆրք 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՒԻ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Կը հրահարակուի նաքաթ օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ: Եկու քիւ ա-
ռաջ հրահարակուած քերքը 40 Սանդիմ:
Զհրահարակուած գրութիւնը եւ յսրոյր:

Հասցէ
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNNA

Ներկայ թուով «Հայելի» իր Բ.
տարւոյ Ա. վեցամսեայն կամրողջացնէ:
այս առթիւ կը խնդրենք մեր արտա-
սահմանի բաժանորդներէն, որ հաճին
ալ եւս վճարել իրենց բաժնեգիրն:

ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ժամանակէ մը ի վեր Վառնայի
երիտասարդութեան կողմէն գէպ ի ըն-
թերցարանը ցոյց տրուած սառն ան-
տարբերութիւնը վերին աստիճանի զար-
մանք ու ցաւ պատճառած էր շատերուս.
ու իրաւամբ կը սպասէինք որ Վառնան
հայ գաղթականութեան այս քիչ շատ
խտացած կեդրոնը՝ ունենար չէնք չը-
նորհք ընթերցարան մը, ուր կարելի
ըլլար մտաւոր զարգացման նոր ու ար-
դիւնաւոր հոսանք մը առաջ բերել:

Դանի քանի անգամներ տեղական
մամուլը փորձեց սթափեցնել երիտա-
սարդութիւնը, որ սակայն մինչև այսօր
որ և իցէ կենդանութեան նշան ցոյց
չի տուաւ:


Արդ, ուրախութեամբ կիմանանք
որ տեղացի աշխոյժ երիտասարդներու
խմբակ մը առաջադրած է վերջապէս
դուրս գալ իր անմեկնելի անգործու-
թենէն և հաստատել կանոնաւոր ըն-
թերցարան մը՝ անկախ բոլորովին նա-
խորդին հաշիւներէն ու կնճռոտութիւն-
ներէն:

Սոյն երիտասարդ խումբը՝ իր ձեռ-
նարկելիք այս օգտաշատ գործը հաստա-
տուն հիմերու վրայ դնելու փափաքով
այժմէն ստած է ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԸՆ-
ԿԵՐՈՒԹԻՒՆ մը կազմակերպել, որ վերջ-
նականապէս գործելու պիտի սկսի յա-
ռաջիկայ տարւոյն սկիզբը:

Ահաւասիկ ամեն ընթերցասէր հայ
երիտասարդի համար գեղեցիկ ա-
ռիթ մը, ցոյց տալու թէ գիտէ քաջա-
լերել օգտակարն ու պիտանին:

Փափաքելի է տեսնել որ մեր երի-
տասարդները իրենց նիւթական ու բա-
րոյական ամեն կարելի աջակցութեամբ
խրախուսեն այս ձեռնարկը, և Վառնան
օժտեն կանուաւոր ընթերցարանով մը,
որուն չգոյութիւնը, պէտք է խոստովա-
նիլ, բացարձակապէս անպատուաբեր է
քաղաքին:

Բոլոր սրտով կը մաղթենք որ յա-
ջողութեամբ պսակուին երիտասարդու-
թեան ջանքերը և հանգուցեալ ընթեր-
ցարանի շուրջը արմատ գտած խառնա-
կութիւնները ծնունդ չառնեն վերստին:



«ՎԱՂՈՒԱՆ ԶԱՅՆԸ»

Այս անունով Մանչեսթրի մէջ երի-
տասարդ նոր գրողներու խմբագրու-
թեամբ սկսած է հրատարակուիլ երկու
սիւնակի վրայ 16 երեսներէ բաղկացած
գրական ամսաթերթ մը, որու առաջին
թիւը, ճոխ պարունակութեամբ, ստա-
ցանք: Ի սրտէ յաջողութիւն մաղթելով
մեր նոր պաշտօնակցաց, գրասէր ազ-
գայնոց քաջալերութեանը կը յանձնա-
րարենք:

Բաժանորդագինն է ամեն տեղի
համար տարեկան 5 շիլին, կանխիկ:

Նամակ կամ բաժնեգին ղրկել առ

S. BARTEVIAN

21 BRIGHTON ST. OXFORD RD.

ENGLAND.)

MANCHESTER

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ



ՈԹՈՆ ԲԻԶՄԱՐՔ

Ծն. 1815, Ապրիլ 1. Մ. 1898. Յըս. 30

Գերմանացի հաւատարիմ ծառայ
կայսեր

ԳՈՒԼԻԷԼՄ ԱՌԱՋՆՈՅ

1815—1898

Հսկայ քաղաքագէտ, օժտուած բարե-
բաստիկ կեանքով. բարձր մարմնով, մտքով,
իշխանութեամբ արհամարհեց ժողովրդակա-
նութիւն. յաղթանակ մտքի, կամաց և ու-
ժոյ ընդդէմ իրաւանց և արդարութեան.
պսակաւորեալ արիւնդարդ զաւիններով:

Ծնեալ 'ի խաբէական աւուր խաղաղ
գիւղի մէջ, խաղաղ ժամանակի տան և տէ-
րութեան. « հրատարակեց (») երեք արիւ-
նարբու պատերազմներ. զոհեց հազարաւոր
« ծնողք, եղբարք, քոյրեր և հարսեր, և
« այս ամեն բանէն չզգաց բնու ուրախու-
« թիւն, այլ կրեց տհաճութիւններ, վշտեր,
աշխատութիւններ »:

1830—1850

Աշակերտ Գոտտինգայի, Բեռլինի, Գը-
րայֆսուպի համալսարանաց. գրգռիչ բը-
նաւորութեամբ խրոխտ և ժպիւհ ընդդէմ
ուսուցչաց. մղեց երեսուն եւ երկու մենա-
մարտներ ուսումնակցաց դէմ. սիրեց և իւր
հետ շրջեցուց շուններ. դատապարտուած ա-
պաշխարեց բանի մ'որ բանտի մէջ:

Սերունդ սլաւական ազնուագարմ հա-
րուստ կոմսերու տոհմի. պսակաւորեալ յօ-
րէնսպիտութեան մէկդի թողլով ձեռք զար-
կաւ զէնքի, գրուեցաւ թեթեւզէն. հետեւակ
վաշտի ղինուոր:

1851—1870

Պաշտօնեայ պետութեան, սիրեց եւ
փառաւորեց մեծապէս իւր հայրենիքը Գեր-
մանիան. ատեց և նուաստացուց սաստկապէս
իւր նախանձորդն Աւստրիան. դեսպան 'ի
Պետրբուրգ և ի Պարիզ, կշռեց մտօք եր-
կու մեծ ժողովուրդներ. գահերէց նախարա-
րաց ժողովուրդն. ղինուորանոց յարձնեց ամբողջ
Բրուսիան. կազմեց մնայուն և հզօր բանակ-
ներ. օգտուեցաւ իւր նախանձորդին զօրու-

(») Չակերտի մէջ գրուածներն են ինքնին
Բիզմարքի խօսքերը՝ զրուցատրութեան մի ժա-
մանակ:

թենէն, Գանձարբայի գէմ որսը բաժնեկով խլեց երկու գաւառներ իւրեւ մասն առիւծին. դաշնակցեց զԻտալիա երկու սուրերու մէջ. մահացու վիրաւորեց զԱւստրիա 'ի Սատովա. վտարեց զնա գերմանական դաշնակցութենէն. լուծեց Տին կայսրութիւն մը՝ նորը վերակազմելու համար. բարձրացաւ գահերէց դաշնակցաց խորհրդարանին. հնչեց պատմութեան մէջ համբաւն ու կոչումն «երկաթեայ դիւանագիրին»:

1870—1871

Գրգռեց յատելութիւն և 'ի պատերազմն խարդախ հնարիւք և սուտ հեռագրաւ երկու խողաղ ազգեր. անձամբ առաջնորդեց 'ի բանակին, ոչնչացուց զրաջի մը՝ իւր տունը կանգնելու համար. անգութ, անխիղճ, անտեղիտալի զինուածի և զօրաւորի հետ կոտորեց նաև անգէնն ու տկաջը. մի միակ դրօշի ներքեւ գերմանական կայսրութեան հաւաքեց. ամրապնդեց, ձուլեց բաւասուն միլիոն ժողովրդեան հասարակաց հայրենիքը 'ի Վէրսայլ. իւր սիրելի վեհապետին ծայրագոյն փառաց ծայրագոյն յաղթանակ կանգնեց:

1872—1878

Անսահման պատիւք. խանգաւառ անվերջ կեցեցներ, փառաշուք տիտղոսներ. ծագուեց և ծիծաղք չմեղկեցին իւր կորովը. ուժոյ ծայրն հասած դարձեալ մրցեցաւ, արտորեց կրօնաւորներ, հալածեց եւ բանտեց եպիսկոպոսներ. արհամարհեց իւր կենաց գէմ անյաջող դաւեր. կուռեցաւ ոգւոյն բոլոր զօրութեամբ ընկերավարչաց գէմ, չկրօցաւ յաղթել ոչ առաջնոց եւ ոչ վերջնոց:

1878—1890

Բեռլինի վեհաժողովին մէջ հիմն դրաւ

եռապետ դաշնակցութեան Գերմանիոյ—Աւստրիոյ—Իտալիոյ, ազատ մնալու. Գաղղիական փոխադարձ վրիժառութենէն. տեղաւորեց միայն անխռով հակադարձ դաշնակցութիւն երկուց պետութեանց Գաղղիոյ և Ռուսիոյ:

1890—1898

Իւր աստղը խոնարհեցաւ, կորսնցուց իւր փայլը, ամփոփեց յետին նշոյլներն շքեղ միայնարանի մը մէջ. անգամ մ'ալ դրուատեցաւ ութսունամեայ հսկայն, որ քարասիրտ հեգնութեամբ կոպտաբար նախատեց և լացուց թշուառներ՝ որոց արտասուքը մարդասիրութեան թաշկինակով կը սրբէր ԳԼԱԴԼՍՏՈՆ:

Կանգնեցաւ իւր գամբարանն անցեալ և ապագայ պատմութեան սահմանագլուխը՝ լեռոն Գարիբալին՝ գերմանական ժողովրդեան ՕՐՀՆՈՒԹԵԱՆՑ. լեռոն Գեբալ՝ հեծեծաւ մըռունչ մարդկութեան ԱՆԻՄԻՑ:
(ԲԱԶՄԱՎԷՊ)

ԱՂԶԿԱՆՑ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՑ

Վարժարանս իր երկրորդ տարւոյ չրջանը կսկսի յառաջիկայ երկուշաբթի Սեպտ. 7ին: Իր ուղղութիւնը անցեալ տարիէն ծանօթ բլալով պատուարժան ծնողաց, աւելորդ կը համարի կրկնել զայն:

Միայն թէ այս տարի փոխադրուած է նոյն չէնքէն հինգ տուն վեր:

Մասնաւոր տեսակցութիւնք կը կատարուին ամեն առաւօտ եւրոպական ժամը 9—12:

Տնօրինութիւն

Դրդ Ուշաստ Բ. Լինիա Ն 40

Յ. Գ. Հրապարակին վրայ պտտած ջրոյցները անտեղի են:

ՎԱՐՊԵՏ ՏՈՒՏՈՒԻՆ ԽԱՍՐՈՑԸ



Վառնաի կարևոր մէկ թաղին է՛ն բա-
նուկ ճամբուն վրայ է այս հռչակաւոր խամ-
բոց—վարժարանը. իր տեսակին մէջ մէկ
հատիկ, կատարեալ ախոռ մը:

Գետնայարկի վրայ, երկու հատ մէջ
մէջի անցած սենեակներով խրճիթ մը. ա-
ռանց տախտակամածի, խոնաւ, թաց ու լը-
պըծուն հողին վրայ երեսունէ աւելի մա-
նուկներ իրարու վրայ դիզուած են մինչեւ
իրիկուն, բոլորովին հակառուպական և հա-
կամանկավարժական գրութեամբ՝ որ կը ըս-
պանէ, կը մեռցնէ մատաղ և յուսալիր սե-
րունդ մը իր ապականուած մթնոլորտով,

Ամեն առտու երբ կանցնիմ ադ տան
առջեւէն, չեմ գիտեր ինչո՞ւ սիրտս անչափ
կը ցաւի. կը կենամ հոն ու ժամերով կը
դիտեմ անուշիկ ու սիրուն փոքրիկները, ու-
րոնք ներսի խոնաւ հոտէն ինքնաբերաբար
փախչելով՝ կուգան դուրսը ազատ օդին մէջ
խաղալու:

Ինչպէս որ ըսի, երեսունէ աւելի են
ատ տղաքները, երեքէն տասը տարեկան,
երկու սեռէ, մեծաւ մասամբ գաղթականի
զաւակներ, որոնք զեռ երէկ առոյգ ու կայ-
տառ, վաղը բոլորովին պիտի խամրին այդ
յարկին մէջ, ուր վարպետ տուտունին հոտած
բէշերուն տակ ծալապատիկ նստած կը պո-
ռան, կը կանչեն կամ կը խաղան:

Վարպետ տուտուն՝ 55նոց պառաւ մը,
առջեւը կապած է գոգնոց մը, որուն մէջ
լեցուցած է թնձկած ու փոշոտած բուրդ՝ որ
կը գզէ ու գզել կուտայ իր աշակերտներուն
անընդհատ, անոր հիւանդոտ փոշիները տը-
ղայոց քիթերուն մէջ լեցնելով:

Ոտքերը բոպիկ, ակնոցը քիթը, քովը
սև գաւազան մը, գլուխը երերցնելով՝ մէկ
կողմէն բուրդ գզել կուտայ, միւս կողմէն
անոնց կը սորվեցնէ իբր թէ՛ նարեկէն բան մը,

որ անշուշտ բերանացի սորված ըլլալու է իր
մանկութեան ատենի վարպետ տուտուններէն,
որուն թափթփութները տակաւին միտքը մը-
նացած են: Տղաքները կը սկսին բարձրա-
ձայն պոռալ. «Վախնի վախն, փախնի խա-
ւարն, մեկնի մուկն, փախչի կատուն, խօսի
կուկուլիկուն». և այլն. վարպետ տուտուն
մինչև իսկ չի հասկնար թէ ի՞նչ կը զուրցնէ.
նա միշտ գլուխը շարժելով իր գոհունակու-
թիւնը կը յայտնէ ու տղայք ամեն օր մինչև
իրիկուն կը շարունակեն, թուրթալի պէս գոց
կընեն անանկ բաներ՝ որ ոչ իրենք կը հաս-
կընան և ոչ ուրիշ մը:

Վարպետ տուտունէն զատ կայ նաեւ
միւսին. միւսին զաւակն է, բաւական զար-
գացած երիտասարդ մը, կը սիրէ սորվիլ բայց
չի սիրեր տղայոց բան սորվեցնել. իր կոչումը
վարժապետի կոչում՝ չէ. ինք ծնած է նուա-
գածու ըլլալու, սակայն բաղդը ընչա՛յն է
չինքն: Վարմիր գիշերազգեստով կը նստի
մինչև իրիկուն սեղանի մը առջև, որուն վը-
րայ բացած է ձայնագրական տետրակներ, ու
կը սկսի սօժել իր չուլթակը՝ մարդուս սիրտը
հատցնող ողորմելի ձայներով. կարծես թէ
խաղկինի մը տակը կը բերթէ, կեղիւնթի մըն
է ըրածը իւշափէն՝ զոր երեք ամիսէ ՚ի վեր
կը փորձէ սորվելու, բայց չի յաջողելուն
համար կը բարկանայ, կը կարմրի, բիթին
տակէն բաներ մը կը մոլտայ ու այն միջո-
ցին բարկութիւնը կը թափէ խեղճ տղաքնե-
րուն գլխին, ձեռքին մէջ ճօճեցնելով չուլթա-
կին կնտնտոցը. տղաք վախերնուն կը սքին
կը մնան, ինչու որ վարժապետին զայրոյթին
համը առած են իրենց երեսներուն վրայ ի-
ջած ապտակներէն:

Նոյն միջոցին վարպետ տուտուն, պղզ-
տիկները զուարճացնելու և միւսիւն ծեծէն
ազատելու համար կը հրամայէ որ ըխիկիկն
խաղը խաղան. ա՛լ պղտիկներուն ուրախու-
թիւնը չափ չունի. ամենքն ալ զուարթ,
մոռնալով միւսիւն սպսոնալիքը, վարպետ
տուտուններնուն շուրջը կը նստին, հողին վը-
րայ, փոշիին մէջ, գէմ դիմաց, ոտքերնին
մէջ մէջի անցուցած, մէկ գծի վրայ հաւա-

սար, ու կը սպասեն հրամանին. նշանը տըր-
ուելուն պէս խնդալով կը սկսին պոռալ կան-
գելու.

« Բիսի բիսի բամպուղի,
Էպիւշիւմին սանտուղի.
Ես պարոնին տղան եմ,
Թագաւորին փեսան եմ.
Չըգտըմ տիվան եօլունս
Տիվան եօլը պիթ բազար.
Իշինտէ այը կէզեր,
Եյը պէնի գօրգուծտու
Գուլաղըմը սարգըծտը,

Արանձալա թուրանձալա սա ուտես սա
վերցնես» ըսելով իրարու հարուածներ կը տե-
ղացնեն. ա՛ւ բեզի վայնասուն մը, գոռում
գոչում, տակէ տակ վրայէ վրայ. լաց կոիւ,
պղտիկին մէկը լալով վարպետ տուտուին կեր-
թայ գանգատելու իր մէկ ընկերոջմէն, որ
միտը կսմթտածէ: Աւարպետ տուտուն անոր
սիրտը առնելու համար երեսները կը շոյէ ու
կըսէ. «Կիտեմ եւվրում, կիտեմ, ան Միր-
եանը բէք առսըզ պան է» ու դառնալով.
«Ծօ՛ Միրեան. կայնէ միւսիւն խապար տամ
տէ բեզի ծեծէ. » նոյն պահուն նորին մե-
ծապատուութիւն միւսիւն այլափոխուած
դաժան դէմքը կը տեսնուի պատուհանէն,
որ կը զարհուրեցնէ պղտիկները, եւ որոնք
խաղը վերջացնելով՝ անկիւն մը կը կծկտին
սարսափահար:

Ու կը մտածեմ թէ այդ անմեղ հոգի-
ները, որոնց վրայ ազգը պիտի դնէ վաղը իւր
յոյսը, այսօրէն կը խամրին կանքարոյակա-
նան այդպէս հոտած ու ապականուած մըթ-
նոլորտի մը տակ, ցնդած վարպետ տուտուի
ու դաժան միւսիւնի մը ձեռքերուն մէջ:
Չարժեր որ խորհինք ատոնց վրայ:

X

ԱՆԿԻՐԹ ՀՕՐ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Ցաւելով կը խոստովանինք թէ մեր մէջ
կը գտնուին այնպիսի անկիրթ հայրեր, ո-
րոնք իրենց զաւկները կը թելու կ'ելնեն եւ

շատ անգամ անոնց ի բնէ ունեցած քիչ շատ
բարոյականն ալ եղծանելու պատճառ կըլ-
լան: Ասկէց զատ, երբեմն կը պատահի ալ
որ հայր և մայր իրենց զաւկներուն իրարմէ
տարբեր կը թուծին մը տալ կաշխատին:
Ասոր մէկ օրինակը կը համարուի հետեւեալը:

Առջի իրիկուն Մելքոն աղան, գիշեր-
ուան մինչեւ ժամը 12 գինետան մը մէջ լաւ
մը արբենալէ ետքը՝ տուն կերթայ:

— Բարի իրիկուն ձեզ. կերակուրը
պատրաստ է.

— Տղաքը կերան, բեզի համար ալ
քիչ մը բան տաքը դրած եմ:

— Տղաքը կերան մի՛. կնիկ, դուն ադ
բռնած ճամբովդ տղաքը գլխէ կը հանես
կոր. ես բանի որ կաշխատիմ զանոնք կըր-
թելու, մարդ ընելու, դուն ընդհանաւ
երես կուտաս կոր:

— Աստուծոյ աչքին մեռնիմ, սըվոր
նայեցէք, զաւկները թէրպիյէ ընելու ելեր
է. գուցում Մելքոն աղա, թէպիյէր կըսե-
նէ, փախաճիներուն թէրպիյէի՞ն համար
է ըսածդ. տղաքը կերակուրին կերեր են,
ի՞նչ է եղեր.

— Տահա ի՞նչ պիտի ըլլայ, տունին
մենծը չեկած սեղան նստիլ կերակուր ուտել
կը վայլէ:

— Ձահէր անթուրթիւնէ պիտի մեռ-
նէին. մինչեւ աս ատեն գինետոնները պը-
տըտելուդ՝ հայր եղիր տէ ժամանակին տունդ
գտնուէ:

— Ես քու խրատիդ պէտք չունիմ.
երբ ուզեմ նէ ան ատեն կուգամ. սըվոր
նայեցէք, շիտկէ շիտակ աւկները կը թել չը
գիտեր, ինծի կը թելու ելեր է. ի՞նչ ապուր
կուտէ. տունին մենծը ո՞վ է.

— Էյ կէնէ մի՛ պաշլայեր, ես կոիւի
գլուխ չունիմ. . . աման սընիէ մէյ մը
դուրս իյնամ » ըսելով՝ տիկինը սենեակէն
մեկնեցաւ:

Մելքոն այդոն, մինակ մնալուն վրայ ա-
ւելի զայրացած՝ օգտու ծօ՛ Աւետիս պոռալ:
Խեղճ տղան վախէն դողալով, հօրը ներ-
կայացաւ:

— Հոսեկո՛ նայիմ պարոն . ես քեզի հազար հեղ չը պատուիրեցի՞ որ , մինչև որ տանը մեծը սեղանին ներկայ չըլլայ՝ կերակուր չպիտի ուտէք :

— Հայր իմ , ուշ մնացիր նէ՛ շատ անօթի էինք , մայրիկս « փասս չունի դուք կե-
րէք » ըսաւ :

— Ես ձեզի բանի անգամ պատուիրեցի որ տունին մէջ իմ խօսքս պիտի ըլլայ . մօրերնուդ խրատներուն հետեւիք նէ՛ ասանկ անկիրթ պիտի ըլլաք , սիրիւձի կըլլաք , հաս-
կըցա՞ր :

— Հասկցայ հայրիկ ,

— Ի՞նչ հասկցար , ըսէ նայիմ :

— Իշթէ սիրիւձիւ պիտի ըլլաք կը-
սես կոր :

— Կով դուրս , մօրդ խօսքերը մտիկ ընես նէ՛ սիրիւձիւ կըլլաս , իմ խրատնե-
րուս հետեւէ որ մարդ ըլլաս :

— Հայրիկ , միշտ կը ծեծես , խրատ տուած չունիս որ միտքս պահեմ :

— Լռէ՛ , թշուառական , քեզմէ մեծին պատասխան տալու չես . այսօր դպրոցը ի՞նչ դաս առեր նայիմ .

— Քերականութիւն , պատմութիւն ,
թուաբանութիւն :

— Ատ ըսածներդ ֆրանքսըզ՞ա՞ է .

— Ոչ հայր իմ , զատ զատ հայերէն գասախօսութիւններ են :

— Ան գիտեմ կոր , աւանակ , իմ ը-
տածս դուն չի հասկցար :

— Արդէն ինչ ըսել ուզելդ չես հաս-
կըցուներ կոր քի :

— Հիմա ոսկորներդ կը կոտրեմ հա՛ ,
անկիրթ շո՛ւն , տահա պօյը վեր չելած , լե-
զուն երկնցուցեր է . գնա՛ տեղդ շնթուկէ
պառկէ՛ :

Աւա՛ղ , մաղթելի էր որ ասանկ հայրեր
գէթ զաւկի տէր չըլլային :



ԱՄՈՒՍՆԱԿԱՆ

ՔՆՆՈՒԹԻՒՆ

Տան մը մէջ այրեւ կին կը խօսակ-
ցէին .

Տիկինը . — Բարի լուր մը պիտի
տամ քեզի . Տիար Ստորակէտին տղուն
համար մեր աղջկան , Բուրմինէի ձեռքը
կը խնդրեն , ի՞նչ կըսես :

Այրը . — Տեսնենք , կը խորհինք :

Տիկինը . — Երիտասարդը տղայու-
թենէն կը ճանչնանք . բաւական ուսեալ ,
բարեկիրթ ու գործունեայ է , ծնողացը
կարողութիւնն ալ դիտենք , այսօրուան
օրս բաւական ունեւոր են . կը յուսամ
թէ դուն ալ ինծի պէս յարմար կը դա-
տես :

— Կը մտածենք :

— Միայն թէ սաչափ ոսկի դրա-
մօժիտ կ'ուզեն :

— Ադ ի՞նչ է . իմ գիտցած մար-
դիքս են նէ՛ դրամօժիտի կարօտ չեն :

— Ա՛հ , սիրելիս , կը տեսնեմ որ
անդէտ կը ձեւնաս , հիմակու ատենը
ունեւորն ալ կ'ուզէ դրամօժիտը՝ չունե-
ւորն ալ . ասիկա ընդհանուր սովորու-
թիւն մը դարձաւ :

— Է՛հ , թող ատանկ ըլլայ :

— Ուզած օժիտնին ալ մեզի հա-
մար շատ մեծ բան մը չէ . սանկ 70-80
ոսկիով կրնանք լմնցնել :

— Շատ աղէկ , ուրի՛շ .

— Ուրիշ բան չի մնաց . հաճու-
թիւն տալդ վաղը իմացնեմ իրենց :

— Պայմանաւ մը կրնամ հաճիլ :

— Ի՞նչ պայման . թէ որ հարսնի-
քը ե՞րբ ընելնին կուզես հասկնալ , հար-
կաւ երկու երեք ամիս միջոց պիտի տան
մեզի :

— Ադ չէ ըսելիքս .

— Տուն—փեսայ չպիտի առնենք :

— Հասկցայ , սակայն . . .

— Դրամոթիտի վճարումին ատենը թէ կ'ուզես հասկնալ, այնչափ ծակ— աչք չեն որ կանխիկ ուզեն. պօնօ մըն ալ կրնաս տալ հարսնիքէն ետքը հա— տուցանելու :

— Ի՞մ ըսելիքս ադ չէ :

— Անոնց խօսքը խօսք է. շատե— րուն պէս նշանաւորութենէ ետքը նորա— նոր խնդիրներ չեն յարուցաներ :

— Ադ ալ գիտեմ :

— Ուրեմն ուրիշ ի՞նչ պայման մը— նաց առաջարկելիք :

— Մտիկ ըրէ որ բռնմ. ասկէ մէկ երկու ամիս առաջ Միջակէտենք աղջիկ— նին այնինչին տղուն հետ ամուսնացու— ցին, այնպէս չէ՞ :

— Այո՛ :

— Ու կարծեմ թէ դրամոթիտ ալ չի տուին :

— Վասն չի չուզեց. ասկէց զատ, բաւական գոհարեղէններ ալ ընծայեց :

— Երանի՛ թէ ոչ այն գոհարեղէն— ները ընծայեր ու ոչ ալ այն սարսափե— լի հիւանդութիւնը նուիրեր : Դիտես ա՛, հարսնիքէն տասնըհինգ օր ետքը աղ— ջիկը հիւանդացաւ, ու բժիշկներուն վկայութեանը նայելով, խեղճ աղջիկը՝ ամուսինին ունեցած դաղտնի հիւան— դութեամբը վարակուած, մինչև այսօր անկողնոյ մէջ կը տանջուի, անանկ չէ՞ :

— Ո՛հ, աւա՛ղ, ճշմարիտ է :

— Հիմա, ես ալ թրքական առածը յիշելով, թէ «կէօզ կէօրտիւղինտէն գօր— դար», վաղը՝ պարոն Միջակէտին պէս սրտաճմլիկ կացութիւն մը չունենալու համար, այսօրէն ա՛մ ամենապարզ պայ— մանը կառաջարկեմ որ, զաւկիս ձեռ— քը խնդրող անձը, իմ ճանչցած բժիշկ— ներէս մէկուն քննութեանը պէտք է ենթարկուի :

— Բայց ճանրմ Տիրատուր աղա, ատանկ բան կըլլայ :

— Ինչո՞ւ չըլլար, մենք որ իրենց տուղինաներով պայմանները կընդու—

նինք, իրենք ալ գոնէ մեր ասմէկ պայ— մանը ընդունելու են :

— Բայց տարօրինակ պայման մըն է ատիկա :

— Անանկ է. դրամոթիտն ալ ի ըս— կղբան ամենուս տարօրինակ երևցաւ, բայց հետզհետէ սովորական բան մը դարձաւ. քիչ ատենէն աս ըսած քննու— թիւնս ալ սովորական բան մը պիտի դառնայ, թէև հիմա տարօրինակ կերեի :

— Ատ ըսածիդ հիշ խելքս չի հաս— նիր. լսողը ի՞նչ կըսէ :

(Շարունակելի)

Երկու ընկերներ

Միւսիւ Զենօփ, վաղը քեզի հետ մինչև Խռադա երթանք քիչ մը զբօս— նունք :

— Ես ալ կը փափաքեմ եղբայր բայց անպիտան դեձակը բանթալոնս չի՛ լմնցուց որ...

— Հագած բանթոլոնդ ի՞նչ ունի :

— Եղբայր, դիտես ա՛, ես քեզմէ բան չեմ պահեր. խօսքը մէջերնիս՝ բանթալոնիս յատակը պատուած է :

— Ա՛... չըսես, անոր համար է որ միշտ ձեռքերդ ետիդ կապած կը պտտիս :

ՕՐԷՆՔ

Արհեստաւորաց բարեօրման

Արտատպեալ

Կառավարական պաշտօնական թեր— թի XX տարւոյ թիւ 30, 98 փետր. 9ի համարէն :

Գինն է 50 սանդիւմ փոսթի ծախ— քով. դիմել Սարգիս Կարապետեան. մակաղին մօպիլի, Ռուսճուգ : Մեծաքա— նակ գնողներուն հարիւրին 25 զեղչ :

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵՐ

ՀԱՆԳԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք:
Այցետոմս, հասցետոմս, նստակա-
նիւթ, հրաւիրատոմս, բարենիշ. տոմ-
սակ եայլն եայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեգօծեալ մէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին.
Գին գոհացուցիչ: Դիմել հայելիի խըմ-
բագրութեան:

ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ՎԱՌՆԱ

Արնդունուին թոշակաւոր աղջիկ-
ներ և փոքր մանչեր, որոնք Յր. Լ. Ա-
միրխանեանցի վարչութեան ներքե կու-
սանին հայերէն, եւրոպական լեզուներ
և դաշնակ:

Վարժարանը կը բացուի առաջիկայ
սեպտեմբերին:

4




ՆԱԹԱՆ ՊԷՑ ԱՄԻՐԻԱՆԵԱՆ

ՄԻԻՆԻՔԻ

Թագաւորական Ակադէմիան
վկայուած

Կուտայ գաշնամուրի եւ ուրիշ նուա-
գարաններու եւ երգի դասեր թէ՛ գործնա-
կանը թէ տեսականը, նաեւ երաժշտութեան
պատմութիւն:

Հասցէն Պատ. Ամիրխանեանցի բնակա-
րանը:



ԲԴԱՐԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ

Բովանդակութիւն թատերա-
կան երգերու և պարերու.
Նաեւ վիճակ ընկերական:
Գին մէկ ֆրանք:



ԿՈՇԿԱԿԱՐ

ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

Մուսալլա, հաճի Հասան աղաի օթէլին
տակ

Ճաշակաւոր, տոկուն, ձեւաւոր կոշիկ
շինել տալ ուզողը պէտք է դիմէ Պ. Ստե-
փան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը
մէկ փորձով երեւան կելլայ:

Դիւերը գիւրմատչելի:



ԳՈՒՇԱԿ

Ա Պ Ա Գ Ա Յ Ի

Կամ Զուարճալի Բաղդացոյց
ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող այն գիրքը կը
ծախուի մեկ ֆրանքի, թղթատարի ծախքով
դիմել խմբագրութեան:

Վայրկենական Տպագրութիւն

Ա Յ Յ Ե Տ Ո Մ Ս Ի

100 հատը 2 ֆր. կը տպագրուի և ա-
նոր տուփին մէջ կը գտնուի Այցետոմսի գոր-
ծածութեան հրահանգը պարունակոր տետրակ
մը, որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբա-
գրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանգիմը
յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 եւ 15 սանգիմնոց նա-
մակադրօշմ կ'ընդունուի: Կտնիկ:

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ
Печатница "Взаимность"—Варна.